

**ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ  
ՈՒՂԵՐԶԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆՂՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ**

Միրելի՛ համաքաղաքացիներ,

ամփոփելով անցնող տարին՝ վստահաբար կարող ենք ասել, որ այն մեր համայնքի համար եղավ ձեռքբերումների և առաջընթացի տարի:

Տարին առանձնացավ կատարված բազում բարեփոխումներով: Թե՛ քաղաքաշինության, թե՛ սպորտային, թե՛ մշակութային, թե՛ կրթության և թե՛ սոցիալ-տնտեսական ոլորտներում մի շարք ծրագրեր իրականացվեցին, կատարվեցին ներդրումներ՝ ի նպաստ Վեղի համայնքի առաջընթացի:

Ձեր վստահությունն ու հավատը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ ուժ է տալիս շարունակելու մեր համայնքի զարգացմանն ուղղված անավարտ ծրագրերն ու նախաձեռնությունները:

Միրելի՛ հայրենակիցներ, թեև կոխելով 2020 թվականը՝ վստահաբար մեր առջև խնդիր ենք դնում՝ համընթաց զարգացում ապահովել համայնքի ողջ տարածքում համայնքի բոլոր բնակիչներին՝ մեծից փոքր: Գալիք տարում ևս մեր աշխատանքային գործունեության կենտրոնում շարունակելու է մնալ համայնքի բնակիչը՝ իր հոգսերով ու խնդիրներով, արժանավայել ապրելու իր ձգտումով: Վստահաբար կարող են ասել, որ 2020թվականը մեր համայնքի համար լինելու է քաղաքաշինական, մշակութային, սոցիալ-տնտեսական ոլորտներում նոր ձեռքբերումների տարի:

Միրելի՛ հայրենակիցներ, թող ամանորյա սեղանների շուրջ հնչած բոլոր բարեմաղթանքներն ու ցանկությունները ի կատար ածվեն:

Հանդուրժողականությունն ու կամեցողությունը թո՛ղ դառնան յուրաքանչյուրիս ուղեկիցն ու կարգախոսը:

Թո՛ղ ձեր ընտանիքներում մշտապես հնչեն մանկան երգն ու ծիծաղը: Թո՛ղ մայրական օրհնանքն ու հայրենի հողի սատար ուժը նեցուկ լինեն սահմանին կանգնած մեր զինվորին, ու թող մեր սահմանը պահող հայորդիներն ապահով և անփորձանք դառնան տուն:

**Ծնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:**